

Յունարի 8-ին ԱՌԱՅԻՍՏՈՒՄ քաղաքակրթութիւնը ընտրութիւնը եղաւ։ Ընտրութեան Յ. Գեղամանցի մայրը ընտրութեամբ, բայց հրատարակեցաւ։ Նորից քուէարկեցին և ընտրութեամբ պ. Յովհաննէս Մուշեղեանց։ Մարտիմանները այդ ընտրութիւններէ մասին կը տպենք հետեւել համարում, մեր սեփական թղթակցից նամակը ըստանալով այդ հետաքրքիր ընտրութիւններէ մասին։

ՀԻՆ-ՆԱԽԻՉԵՒԱՆԻՑ մեզ գրում են հետեւեալը։ «Մեր քաղաքում լազտերները շատ վատ են լուսաւորում և այնքան հեռու են միմեանցից, որ մէկը միւսից չէ երևում։ Փողոցները կեղտոտ են, անցնելու հար չը կայ ցիւրից, բայց մեր ոտովկանութեան գործունեայ անդամները ոմանք, փոխանակ հոգ տանելու այդ ամենի մասին, պարտաւորում են զանազան պ. օ. դ. ր. ա. դ. ն. և ր. վերջնելով և օգրուա քաղելով։»

ՀԻՆ-ՆԱԽԻՉԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Նորերում մի պարտն, 46 տարեկան, նշանվել է մի 14 տարեկան աղջկայ հետ։ Ասում են, որ փեսացուն այնքան մարդասեր է, որ վճռել է զեւ մի քանի տարի սպասել մինչև աղջիկը հասակ առնի։ Բայց թէ ինչն կը ծերանայ, այդ քանի վրա չէ էլ մտածում։ Գուցէ, մինչև որ աղջիկը հասակ կառնի, նա հաւատացած է, որ ինքն առաւել երկտասարդ կը դառնայ։»

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են։ «Քաղաքին արևմտեան կողմում, Գարեգեոսի մօտ, յանուն հայ-կաթողիկոս ուսումնարանի կառավարութիւնը ընծայեց մի անապին տարածութեամբ զետեմ, ուր կարելի է ծառաստան և բանջարատեղ գարգացնել և առ նուազն յառաջիկայ տարում մօտ 200 բուրլ մուտք ստանալ։ Այժմ լուսւմ ենք, որ հայր Արարատեանը, առանձին ժողովրդական ստորագրութեամբ կամենում է իւրացնել այդ գետնը։ Արդեօք ստոյգ է մեր այս լուսւմը։»

Մի հայ կաթողիկ պարտն գրում է մեզ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ հետեւեալը։ «Մեր լուսաւորական եղբայրները կարծում են, թէ միայն նրանց մէջ է, որ օրից օր աւելանում է ոգէտ և անբարոյական քահանաների թիւը, այն ինչ նոյն երեւոյթը նշանակում է և մեր հայ-կաթողիկներէ մէջ։ Մօտ օրերումս պէտք է մէկը ձեռնարկով, որ և կաւելայնի մեր ազգէտ և մղեւանդ քահանաների թիւը։ Մերնք են, որոնք զխաւորապէս սերմանում են ստեղծութիւն մեր և լուսաւորական հայերի մէջ. կարծես թէ չէ կարելի այլ և այլ կրօնքների պատկանել առանց միմեանց ատելու։»

ՆՈՐ-ԲԱՅԱՉԵՏԻՑ մեզ գրում են։ «Նոր-Բայազետում յետադիմութիւնը, շնորհիւ իր մի քանի խաւարասեր առաջնորդների, սկսում է խոր արմատներ դցել։ Ուսման կարեւորութիւնը հաւածվում է և նրա զաղափարը ենթարկվում է փողոցային իշխոյնների քաղաքային ղեկավարաց։ Միմօն Աղայիանց բացարձակ անիծում է ուսումը, լուսաւորութիւնը և դպրոցները։ Յաւաքի է, որ վերջին ժամանակներում նոյն մարդը նորից ընտրվեցաւ ղեկավարուա։ Ասում են որ նրա ընտրութիւնը շատ անկասուն է եղել։»

Պ. Արէլ Ապրէսեանց, որ յանձն է առել հրատարակել Բաֆֆի թիւերը վէպը առանձին գրքով, ինչպիսիւս է մեզ յայտնել, որ նրանք, որոնք ցանկութիւն ունեն գրվել «Թեմային» բարեհաճն շտապել իրանց վճարը ուղարկել պ. Ապրէսեանցին, նոյնպէս և նրանք, որոնք բարեհաճ են իրանց բարեկամների շրջանում բաժանորդներ հաւաքել, շուտով հասցնեն հաւաքած վճարը։

Պ. Տիգրան Նաւասարդեանց ինչպիսիւս է մեզ յայտնել հետեւեալը։ «Արդէն բաւական ունեւ ժողովում և դարձեալ ժողովում հմ ժողովրդական առաւելներ (հ. թ. հ. ա. թ. ն. ր.), առաջին էր, առ է ծ. ք. ն. ր., օրհն. առ. ք. ն. ր., հ. առ. է. ու. կ. ն. ր., նաև բուն ժողովրդական բառեր և ոճեր թէ կրկնագործական գործիքների, թէ անային կահկարասիների, բայտերի, կենդանիների և այլ անուաններ։ Ինձ նիւթ ուղարկող իմ գրքի տպագրութեանց յետոյ մի օրինակ ձրի կը ստանայ, ինձ կարող են զիմն հետեւել հասցէով։ «Тифлисъ, въ Частную Лечебницу, Доктору Ваграпу Навасарянцъ».

Եղանակը ԹԻՖԼԻՍՈՒՄ շատ օտարաժող և անբնական է։ Ձիւնի տեղ անձրևներ են գալիս երկուր չորութիւնից յետոյ, և լինում են այնպիսի ստոտիկ քամիներ, որոնք սովորաբար միայն մարտ ամսին են լինում մեզ մօտ։

Քանի մի օր է զարձ ալ Ռուսաստանի փոստը չէ ստացվել Արտիսեան սպարէի վրա ընկած մեծ ձիւների և յաճախ պատահող փոթորիկների պատճառով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՈԼՈՍԵՆ ԼՐԱԳՐԻ ԶԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Голосъ» լրագրի ներկայ տարվայ առաջին համարի մէջ կարգում ենք հետեւեալ առաջնորդող յօդուածը հայերի մասին։

Քանի որ Բերլինի դաշնագրի ստորագրող մեծ պետութիւնները երբեմնապէս բանակիր են սկսում Բ. Ղրան հետ շտապանի մէջ մտցնելի վերանորոգութիւնների մասին, հայկական հարցի ծագելու պատճառով զայրացած թիրբաց վարչութիւնը սխտեմատիկաբար ոչնչացնում է փոքր-Ասիայի հայ ազգաբնակչութիւնը։ Աւազարութիւն ենք դարձնում ներքեւ տպւած Մուշից ստացած թղթակցութեան վրա։ Պա ստացված է կատարելապէս արժանահաւատ մի անձեւա որութիւնից, որ պատահաբար վրայ է եղել այդ անցքերի, որոնց նմանները ամեն օր կատարվում են Հայաստանի շատ տեղերում։ Միթէ Լեւոպան իր ստորագրութեամբ հաստատեց Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը նրա համար, որ աւելի էլ անտանելի դարձնի Ասիայի քրիստոնէայ ազգաբնակչութեան կեանքը։

Բերլինի դաշնագրի միւս բաղմաթիւ յօդուածների հետ Բ. Գուռը մուտացաւ նոյնպէս և 61-րդ յօդուածը։ Նա երկար չէ և մենք կը յիշեցնենք նրան։

«Բ. Գուռը պարտաւորվում է անյապաղ իրագործել բարենորոգութիւններ և վերանորոգութիւններ հայերով բնակեցրած նահանգների մէջ տեղական պահանջների համեմատ և պաշտպանել նրանց ապահովութիւնը չեղքեցնելից և քիւրդերից։ Բ. Գուռը անընդհատ կը հազարդէ պետութիւններին տեղեկութիւններ այլ նպատակին համեմու համար գործադրած միջոցների մասին, որոնք (պետութիւնները) կը հսկեն նրանց զործագրութեան վրա»։

Այս յօդուածի առաջին և զիսաւոր բաժինը բառացի կրկնութիւն է Սան-Ստեֆանոյի մէջ կապված սկզբնական խաղաղական դաշնագրի 16-րդ յօդուածի։ Անկասկածելի է, որ հայկական խնդիրը բարձրացրած է Սան-Ստեֆանոյի դաշնագրով և ներշնչված է Քաղաւոր կայսրի քրիստոնէական ողորմարարութեամբ։ Բացի այդ այն երկիրը, որտեղ կատարվում են թիրբաց վայրենութիւնները, մեր երկրին սահմանակից է։ Թիրբաց ձշու մից ամեն ինչ հայ ազգաբնակչութիւնը մեզ միշտ հաւատարիմ է եղել ամեն տեսակ պատերազմների ժամանակ և դրանով պատճառ է դարձել թիրբաց տանելութեանը։

Հետեւաբար Ռուսաստանը բարոյապէս պարտաւոր է հայկական խնդրի լուծման սկզբնապատճառ դառնալ և պիտի, որ խոստացած վերանորոգութիւնները անյապաղ մտցնվեն Հայաստանի մէջ։ Այդ գործի մէջ Ռուսաստանը կարող է յուսալ, որ բոլոր պետութիւնները կը պաշտպանեն նրա պահանջները, որովհետեւ 61-րդ յօդուածի երկրորդ մասը ոչ թէ միայն Ռուսաստանին է պատկանում, այլ և Բերլինի դաշնագրի

ստորագրող բոլոր պետութիւններին, որոնք, պարտաւորված լինելով հսկել թիրբաց Հայաստանի մէջ մտցնելի բարենորոգութիւնները և վերանորոգութիւնների գործադրութեւ վրա, չեն կարող անտարբերութեամբ նայել այն գազանութիւնների վրա, որոնց մեզ հազարդում են Մուշից։

«Մշակի» հետեւեալ համարներից մէկի մէջ կը տպենք «Голосъ»-ի այն թղթակցութիւնը Մուշից, որի առիթով լրագիրը տպել է այս առաջնորդող յօդուածը։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Մուշ, 2 դեկտ. 80

Հայկական կեանքն այսօր խիստ ծանր և վերահաս վտանգներով շրջապատու է Հայաստանի մէջ. ամեն տեսակ միջնադարիւնք կը լինին հայութիւնը չնչեւու այս երկիրներէն, զի կը կատարվուի ինքն փոխանակ հայոց ցաւերուն զաւման և վրայց վրա սպեղանիներ գնելու, չի խզնիր նոր վերքեր և խոցեր բանալու իրենց զիսկապրտ մարմնոյն վրա, այն տանն ծայրադրյն թշուառութեան և յուսահատութեան մէջ զիւրին է ամեն մարդու երեւակայ թէ ինչքան դառն կը լինի իրենց վիճակն և անտանելի կեանքը։

Վասպուրականն ամապցնելու ամեն ճիւղն կը թափուի սոփե սատակացնելով, չէլին մեղեանդութիւնն և բարբարոսաց կատաղութիւնը դրբունելով, զինուորական արշաւանքներն բազմապատկելով։ Բաղէշը կը ջլատեն և կը լքանեն վրանարեակաց բազմաորութեան մէջ հեղձանելով հայուն կայքն ու կարողութիւնը, կեանքն ու ապրուստը, խլելով հայ մանկան հայն և տալով քրդին, զրկելով Վանայ տառապախի՝ Սիլիսի դատարկապարտներն պարարտացնելու համար։ Նոյնն ի Տիգրանակիրտ, ի Գարեբեղ, յէրզնկա և ի Այրլին։ Իսկ Տարսուս իրեն հաւատարակչու նրժարներու մի սլաք չը կրնալով ոչ մի կողմ հակեցնել, տեղի վրա ոչնչացնելու վճռոյն դատապարտուած կը տեսնուի։ Իպոս կը դարձէ, կը սպաննէ, կը թաւնէ, Մէհմէտ Ալին կայքէ, կը կողոպտէ, կաւերէ, Միրզա պէկն և Սալէյճ Աղայն կը մահացնեն հայուն կեանքն ու պատիւը, կը պղծեն կրօնական և բարոյական, բողոքներ, խնդրագրեր, աղբիւրներ կը թափին կառավարութեան առաջ, նա փոխանակ գործուն և բուն միջոցներու ձեռնարկելու, միջնորդներով բանակցութեանց կը մտնէ այդ գազան Տրէշներու հետ, պատուիրակներ և թղթեր կը դրկէ ու կընդունի, պայմաններ կուտու կելնէ, մէկն իւր կնարին տեսուչ կը կարգէ, միւսն տասնաորդաց գողութեանց բացարձակ քննիչ կանուանէ, երբորդին միւսթիւթիւն կուտայ, իսկ չորբորդին իրեն ամենապատուաւոր մի մարդու տունակաւ կը խնդրէ որ գայ բանդը մտնի, առանց բնաւ իսկ մտաբերելու թէ այդ ժամանակներու իւրբաբանչիւր ժամն կանցի մահ կամաւեր բերելով գիւղացի հայուն զլինին։

Բայց երբ ամեոյս 25-ին կիրակէ երեկոն զինուորական հազարապետ մը զինով և զինովներէ շրջապատուալ կուգայ Մշու գաւառի Ալէլաբլինձ հայ գիւղը, օթեամի փոռն պատրուակաւ վճէ կը բանայ խումը մի դարձեալ գնեկիթիթ գեղացւոց հետ. վճէր կուի, կուիւր ձեծի կը փոխուի, երկուտեք հաւասարապէս զիրար փոխարինելով։ Երբ կըսեմ զիւրեւան ժամ 10-ին կատարելու իւր տան մէջ քանիմը զինուորական սպայից հետ Բաքոսին պաշտօն անտուցանելու կրնանայ երկուութիւնը, իսկոյն դատական ժողովովն, գունարտակ մի կամոնաւոր հեծելազօքը, ոտովկաններով, զօրապետներով, իսկոյն կը հասնի գիւղը, կը սփռէ զօրքն գիւղին մէջ, գիւղացիք զահի հարեալ զլր և ցան կը փախին, ահպէս որ միայն գիւղացիտն, քահանայէն և քանի մը ութսունամեայ ծերունիներ գեղին մէջ մնացած միակ այր չափահասներ կը ձերբակալին և ի ծիծ մատնելով հարցաքննութեան կենթարկուին։ Զօրքը տներէն ներս խուժելով մայրն ու մանուկն, քոյրն և երեխայն, ծննդական ու հիւանդը, պատան ու ծերը անխնայ կը տանջեն, մտանները կաւարեն, կենդանիները կը մորթեն, ցորեն ու գարին ձիրոն առաջ և հողերուն մէջ կը թափեն, հայդայնք, շուտաք կը տեղան կըրծնի, ազդութեան և պատույ դէմ, կառավարչն ևս բազում սպառնալեաց հետ բիւր անարգանս

կը ժայթքէ հայ ղեկավարաց զլին, զիւրն այրելու, ջարդելու հրամաններ և գոռուներ ամեն բերնէ կորոտան, նոր փախուստներ արուի և իրի, հրացանները ձայնել կը սկսին, վիժմունք, ուշափափութիւնք, լեզապատուութիւնք ամեն ինչ տեղի կուենան. վրաւորաց և զարհուրաց լայն ու ճիւղը, վախատուն և աղաղակը օդն ու լեւաները կը թնդայնէ. մօտ տեղեր ապաստանալ փախուստականք չը կրնալով զիմանալ իրենց ընտանեաց այս աղեկուսը տեսարանին, քիչ թիչ գալ կը սկսին անհարին տանջանաց ենթակալ, զօրս կառավարչին մի տեղ գամել տալն վերջ կը շարունակեն ինքն և իւրայինքն առաւել սատարութեամբ։ Ալէլաբլինձը վիճակալ էր զըզանչըր ամեն տարբարագլութեանց, եթէ քաղաքիս ոտովկանապետն իւր ամեն ոյժն ի գործ չը դըներ մեղմացնելու համար այդ կատղած գազանները։

Այն ժայրայել միջոցներով կատարուած քննութեամբն իսկ ութ մարդ միայն ամբաստանեալ կը նկատուին, որոց չորսն կը ձերբակալեն առաւօտանն լուսով հանդերձ ուրիշ քառասունի մօտ անձերով. և այն անա ինչպէս, իրենց եղած տեղերէն երեսի վրա տաներէն ընդքարչ անելով գաւազանի և հրացանի կոթի հարուածներու տակ կը բերեն մինչի վրայ, դատական պաշտօնեաց և ընդհանուր դատախազն, որ հայ մի է, իրենց չորս ներկայ ամբաստանեալք կը դատեն, և մնացածներն արձակել կը պահանջեն։ Առաւփարչն որ աւարներին իրեն մասն ինկած կարաս մը զինի աւելը դրած իւրայնոց հետ կը խմեր և կը փոխեր, կը հրամայէ պամնքն ևս կատկով քաղաքը բերել. ի զուր կը բողոքեն գատարանք, և երբ խումը մի կանայք մանկուան ի զիրիս կուգան յայտնելու թէ առնք յանցաւոր չեն և կը խնդրեն արձակել, կը հրամայէ սոխմահարել, իսկոյն կը կատարուի իւր հրամանն և քանն երկու մարդ ձեռքերն ու թեւերը կապուած հարուածներու և կոխտանաց ենթակայ բերուցան քաղաքը։ Գիւղէն մեկնելու մի եօթնամասնեայ պառաւ ինքիւնքն կը ձգէ կառավարչի ձեռն ոտներուն վրա իւր անմեղ միամօրին արձակումը խնդրելու, բայց մտախի հարուածները ընդունելով նոյն իսկ կառավարչն և ձեռն տողի կօխան լինելով այսօր ինքն ևս մահուան դուռն է։

Բարեբաղղ կը համարել ինքն զինքն Տարսուս, եթէ այս զոհերու բաւականանային իրենց արիւնով սրբելու պիտիներու ժանտ հոգուց ժանդը. իսկ աւելի բարեբաղղ կը տեսնելով զիւր օրգիս ազատ չնորիւ Վանայ սուտական հրկապատու կամարական պէլի մարդասիրական և ազգասիրական ջանից։ Երկու երեք օրէ ի վեր տեղս կը գտնուի արդէն վսեմ. հրկապատան, որ երկուութիւն իմանալուն պէս զրկել իւր թարգմանը Ալէլաբլինձ և օրինաւոր զննութիւն մը ընել տուաւ, և այնուհետ ամենատուր և ազգու միջամտութեամբ պահանջեց արձակել ոչ—ամբաստանեալներն. և մնացածներն ևս ազատել տարապարտուց և ցած աշխատութիւններէն, զօրս կրն կուտային իրենց զօրանոցի արտաքնոցի արբանոցները մարքել տալով. երեսնին ապականելով և նշաւակ աշխարհի կացուցանելով. առժամայն կատարվեցան իւր պահանջմունք. 18 հողի լիայոյս և լիասիրտ դարձան իրենց գեղը, 4 հողին էլ գորանուցէն բանդը փոխադրուցանա։ Կը յուսամք թէ կամարական պէլի փրկարար ներկայութիւնը ասանց դատաստանին վրա ալ արդար ազդեցութիւն մը անելով շատ կազատուին։

Ալէլաբլինձը Մշու գաւառի այն գիւղերէն մէկն է, որ պատերազմի ժամանակն իսկ չիւղ մի կողոպուտ տուած չէ շնորհիւ իւր բնակչաց քաջութեանն, զոր մեռցնելու միակ նպատակաւ անշուշտ ծնունդ տուին այս քտամնելի պատահարին։ Ալէ մեր հաւաքքն այն է թէ այս պատճառաւ տեղի ունեցած պաշտպանութիւնքն քաջալերուին ու սրտապնդուին բոլորովին տարբեր և կառավարութեան անկալութեան հակառակ արդիւնքներ կարտադրեն ոչ միայն Ալէլաբլինձի, այլ բոլոր գաւառի հայոց մէջ, որք ամենայայնուր կերպով տեսան թէ ինչ է եղել իրենց նեցուկ և ապաւէն համարած կառավարութեան պաշտպանութիւնն, և թէ այսուհետև ուրիշ կերպ պաշտպանութեան և օգնութեանց միջոցներ ձեռք առնելու հետամուտ պիտի լինին.....

Գիսակ

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ